ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Արայիկ Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Անժելա Բարխուդարյան-ից

(դիմողի անուն, ազգանուն)

ք.Երևան,Վ.Աճեմյան 28, (+374)94030745

angela.sportpsy@gmail.com

(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

2. Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ

3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Անժելա Բարխուդարյան

27.09.2019թ

ՀՀ մշակույթի նա[illegible]
աշխատակազմ[illegible]
Մուտք թիվ 4/4911619
27 09 19 թ.

Տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

2018թ.-ին ընդգրկված եմ եղել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Խորհրդի նիստերի ընթացքում հիմնականում բարձրաձայնել եմ սպորտային հոգեբանության կիրառական նշանակությանը առնչվող հիմնահարցերը և նրանց լուծման հնարավոր ուղիները: Տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքականներում ընդգրկված, ինչպես նաև հեռանկարային մարզիկների հոգեբանական ապահովման և նրանց հետ տարվող աշխատանքների մոնիտորինգի ունիվերսալ համակարգի ձևավորման անհրաժեշտության մասին՝ ներկայացնելով Հայաստանի բռնցքամարտի երիտասարդների և մեծահասակների հավաքականների հետ իրականացրած աշխատանքները (2014թ.-ից մինչ 2018թ.-ը): Ներկայացվել է՝ «ՀՀ մարզիկների արդյունավետության բարձրացումը սպորտային հոգեբանության առաջատար մեթոդների ներդրան և կիրառման միջոցով» մեր կողմից մշակած ծրագիրը: 2013-ից մինչ օրս իրականացնում եմ հոգեբանական գիտահետազոտական և խորհրդատվական աշխատանքներ ՀՀ տարբեր տարիքային խմբերում ընդգրկված մարզիկների շրջանակում, որոնց արդյունքների մի մասը տպագրվել են գիտական հոդվածների տեսքով և ներկայացվել տարբեր գիտաժողովներում, ինչպես մեր երկրում, այնպես էլ երկրից դուրս: Հանդիսացել եմ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ա.Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ(2013թ.-ից մինչև 2018թ.-ը): 2019թ. ՀՖԿՍՊԻ հոգաբարձուների խորհրդի անդամ՝ լիազոր մարմնի կողմից առաջադրված:

Իրականցրել եմ հետազոտական աշխատանքներ Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի մարզիկների հետ, զուգահեռաբար հոգեբանական գործիքային և ոչ գործիքային հետազոտություններ եմ սկսել իրականացնել նաև ՀՀ բռնցքամարտի տարբեր տարիքային խմբերի հավաքականների հետ: 2017թ.-ի հոկտեմբերի 23-ից 26-ը մասնակցել և զեկույցով հանդես եմ եկել (Բռնցքամարտիկների անձնային տագնապայնության վերահսկման առանձնահատկությունները) «Հոգեբանական սպասարկման հիմնահարցերը բարձր

նվաճումների սպորտում» միջազգային գիտաժողովին: 2019 թ.-ի փետրվարի13 –ից հասարակական հիմունքներով ընդունվել եմ աշխատանքի ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայում որպես մարզական հոգեբան և միաժամանակ փոխպայմանավորվածության արդյունքում ֆեդերացիան ձեռք է բերել հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների համար նախատեսված УПФТ-1/30 «Психофизиолог» սարքավորումը, որը կիրառում ենք մարզիկների հոգեբանական ապահովման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով: Հանդիսանալով «ՀՀ մարզիկների արդյունավետության բարձրացումը սպորտային հոգեբանության առաջատար մեթոդների ներդրման և կիրառման միջոցով» ծրագրի հեղինակ, այն ներկայացրել եմ «Հոգեբանական պրոբլեմներ, բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները» միջազգային գիտաժողովում (21-23 ապրիլ, 2019թ.): 2019թ.-ի մայիսի 28-ից 29-ը մասնակցել և ներկայացրել եմ գիտական հոդված (որը տպագրվել է) «Рудиковские чтения 2019 » գիտագործնական կոնֆերանսում:

2019թ.–ի հունվարից մինչ օրս աշխատում եմ ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում, որպես դասախոս:

Վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Սպորտի և երիտասարդության բնագավառներում նախարարության կողմից իրականացվող աշխատանքներից հատկապես հետաքրքրված եմ եղել հավաքական թիմերի ընդհանուր՝ ինչպես ֆիզիկական, տեղնիկատակտիկական, այնպես էլ հոգեբանական պատրաստականության գործընթացների իրականացման ողջ ընթացքով: Մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրել եմ նախարարության կողմից իրականացվող այն միջոցառումները և միջոցների կիրառումը, որոնք ուղղված են եղել հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների հոգեբանական պահովմանը սպորտային գործունեության իրականացման տարբեր փուլերում՝ մարզումների, ուսումնամարզական հավաքների և տարբեր կարգի մրցումների ընթացքում: Բացահայտելով այն հանգամանքը, որ մարզիկների հոգեբանական ապահովմանը ուղղված աշխատանքներ գրեթե չեն իրականացվում, կամ իրականացվում են թերի, քանի որ հավաքական թիմերը չունեն մշտական հոգեբանական աջակցություն ստանալու հնարավորություն, չնայած այն հանգամանքին, որ «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն»-ը այս գործառույթն իրականացնելու համար ունի նախարարության կողմից հատկացված համապատասխան աշխատանքային հաստիքներ(հոգեբանների): Սակայն այս գործառույթը չի կատարվում՝ միգուցե այն պայմանավորված է ֆեդերացիաների չտեղեկացված լինելով, մասնագտիական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունների բացակայությամբ կամ ինչ-որ այլ պատճառներով: Նախարարության աջակցությամբ 2017թ. և 2018թ. թվականներին կազմակերպվել է «Սպորտային արդի հիմնախնդիրները 4 –րդ և 5-րդ գիտագործնական դասընթացները», որոնք ուղղված էին մարզչի հոգեբանական ասպեկտների կատարելաքործմանը: Դասընթացների տևողությունը եղել է երկու ժամ, որի ընթացքում մասնագետները հանդես են եկել զեկույցներով և բացակայել են գործնական աշխատանքները: Դասընթացի ընթացքում նախարարության աշխատակազմի կողմից պարբերաբար նշվել է, որ Հայաստանում սպորտային հոգեբանության ինստիտուտը կայացած չէ, սակայն այդ ինստիտուտի կայացմանը նպաստող օղակներից մեկը հենց ինքը նախարարությունն է հանդիսանալու:Նախարարության կողմից այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները, որոնք նախկինում կրել են ձևական բնույթ, ապահովելով ձև և ոչ բովանդակություն, ներկայումս, այս երկուսի համատեղ ապահովումը կնպաստի սպորտային հոգեբանության կայացմանը մեր երկրում, ինչպես նաև հավաքական թիմերի մասնագիտական հոգեբանական ապահովման իրականացման հնարավորությանը:

2016թ.-ից նախարարությանը և անձամբ նախարարներին ներկայացված է եղել մեր կողմից մշակված ծրագիր, որը պարբերաբար քննարկման է ենթարկվել նախարարության տարբեր ստորաբաժանումներում :Այնուհետև 2018թ.-ի սեպտեմբերի –ի կայացած ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերին նախարարին կից հասարակական խորհրդի նիստում որոշում է կայացվել մշակել համապատասխան իրավական փաստաթուղթ, որը կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը՝ մարզաձևերի հավաքական թիմերի հետ պիլոտային ծրագիր իրականացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ARMENIAN BOXING FEDERATION / ФЕДЕРАЦИЯ БОКСА АРМЕНИИ
ՀՀ, ք. Երևան 0054, Դավթաշեն 3թ., Վարչական շենք, հեռ.՝ (+374) 11 51 82 72
Administrative building, Davtashen 3 quarter, Yerevan 0054, RA, tel.: (+374) 11 51 82 72
РА, г. Ереван 0054, Давташен 3кв., Административное здание, тел.: (+374) 11 51 82 72
E-mail: armboxfederation@gmail.com

05.09.2018թ.

01/408

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Անժելա Արամայիսի Բարխուդարյանին, առ այն, որ նա 2015թ.-ից իրականացնում է հոգեբանական հետազոտական աշխատանքներ (թեստավորումներ, գործիքային հետազոտություններ և այլն) Հայաստանի Հանրապետության բոնցքամարտի տարբեր տարիքային խմբերի հավաքականներում ընդգրկված մարզիկների հետ:

ՀԲՖ Նախագահ՝ Ա. Գևորգյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
«ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ
ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И
СПОРТА АРМЕНИИ» ФОНД

REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
«ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND SPORT» FOUNDATION

0070,Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ.(3741) 55-62-81, Ֆաքս (3741) 55-41-04
E –mail info@asipc.am
0070, Ереван, Ал. Манукян 11
Тел. (3741) 55-62-81 Факс (3741) 55-41-04
0070, Yerevan, A.Manukyan str. 11
Phone (3741) 55-62-81 Fax (3741) 55-41-04

01-03/004 «16» 09 2019թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Անժելա Արամայիսի Բարխուդարյանին առ այն, որ նա 2013թ. հունիսի 28-ից մինչև 2018թ. հուլիսի 4-ը հանդիսացել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ) Ա.Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ:

Հիմք՝ 2013թ հունիսի 28-ի գիտական խորհրդի նիստի թիվ 11 արձանագրություն:

Տրվում է ներկայացնել՝ ըստ պահանջի:

ՌԵԿՏՈՐԻ ԺՊ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.ԽԻԹԱՐՅԱՆ

Տեղեկանք

Տեղեկանքը տրվում է Անժելա Արամայիսի Բարխուդարյանին, առ այն, որ նա 2014-2015թթ-ին կատարել է հոգեբանական հետազոտական աշխատանքներ ,,Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց,, ՊՈԱԿ-ի մարզիկների հետ:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու ըստ պահանջվող վայրի:

Տնօրեն՝ Ս. Գասպարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ARMENIAN BOXING FEDERATION / ФЕДЕРАЦИЯ БОКСА АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան 0054, Դավթաշեն 3թ., Վարչական շենք, հեռ.՝ (+374) 11 80 20 02
Administrative building, Davtashen 3 quarter, Yerevan 0054, RA, tel.: (+374) 11 80 20 02
РА, г. Ереван 0054, Давташен 3кв., Административное здание, тел.: (+374) 11 80 20 02
E-mail: armboxfederation@gmail.com

13.02.2019թ

ՀՐԱՄԱՆ 03

ԱՆԺԵԼԱ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս/թ փետրվարի 13-ից Անժելա Բարխուդարյանին հասարակական հիմունքներով ընդունել աշխատանքի ՀՀ բոնցքամարտի ֆեդերացիայում որպես մարզական հոգեբան:

Նախագահ *Ա.Գևորգյան*

Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ

Հասարակական խորհրում ներգրավման նպատակս, որպես հոգեբան, ով ինչպես գիտահետազոտական, այնպես էլ հոգեբանական խորհրդատվական աշխատանքներ է իրականցրել սպորտի ոլորտում և որպես դասախոս, կայանում է՝ մասնավորապես մարզիկների հոգեբանական ապահովմանը առնչվող առկա խնդիրների բացահայտումը, բարձրաձայնումը և նրանց հնարավոր լուծումների առաջարկումը: Ինչպես նաև նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը և առնչվող ոլորտների զարգացմանը, հնարավորության սահմաններում, կիրառելով մասնագիտական գիտելիքները և փորձը:

Մասնագիտական գործունեությանս ամբողջ նպատակս է եղել և կա սպորտային հոգեբանության հնարավորությունների կիրառումը գործնականում՝ որոնք կնպաստեն մարզիկների սպորտային գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ինչպես նաև հոգեբանական ուսումնասիրությունների իրականացումը սպորտի ոլորտում, տեսական և գործնական նոր մոտեցումներ մշակման նպատակով: